ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2000 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 2 մարտի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Ա. Ֆիդանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1947-Ա որոշմամբ «2019 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի դեկտեմբերի 16-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի դեկտեմբերի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվա քաղաքում՝ թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի, դրանց համարժեքների, ածանցյալների, ինչպես նաև բաղադրիչների և հոգեակտիվ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցությունը կատարելագործելու նկատառումներով 2000թ. նոյեմբերի 30-ին ստորագրված՝ «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) փոփոխություններ կատարելու նպատակով:

Իր հերթին, Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Հանրապետության նախագահի՝ 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՆՀ-969 հրամանագրով:

2. Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի ուժով Համաձայնագրի 1-ին հոդվածը լրացվում է «Օգտագործվող հասկացություններ» վերտառությամբ 1.1 հոդվածով, նույն հոդվածի 2-րդ կետի ուժով Համաձայնագրի 4-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրվում է Արձանագրության 1-ին հոդվածի 2.1 կետում սահմանված բովանդակությամբ, իսկ 4-րդ հոդվածի 4-րդ պարբերությունից հետո ավելացվում են նոր պարբերություններ՝ Արձանագրության 1-ին հոդվածի 2.2 կետում սահմանված բովանդակությամբ:

3. Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա պարտավորվում է Արձանագրությամբ սահմանված կարգով փոփոխել Համաձայնագիրը, որի արդյունքում ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագրի կողմերի հետ թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցությունն իրականացնել նշված ոլորտում հանցավորության իրավիճակի մասին օպերատիվ, վիճակագրական, գիտա-մեթոդական և այլ տեղեկատվության, թմրանյութերի և բաղադրիչների, համարժեքների, ածանցյալների, հոգեակտիվ նյութերի ապօրինի շրջանառությանն առնչություն ունեցող անդրազգային հանցավոր խմբերի և դրանց առաջնորդների մասին տվյալների միասնական բանկը լրացնելու համար տեղեկատվության փոխանակման ձևով, այդ թվում՝ ներառելով Արձանագրության 1-ին Հոդվածի 2.1 կետում նշված տվյալները (Հոդված 1, կետ 2.1),

- Համաձայնագրի կողմերի հետ թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցությունն իրականացնել թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության հետ կապված անդրազգային բնույթի հանցագործությունների բացահայտման և հետաքննության նպատակով օպերատիվ-հետաքննչական համատեղ խմբերի ստեղծման ձևով (Հոդված 1, կետ 2.2),

- Համաձայնագրի կողմերի հետ թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցությունն իրականացնել համալիր համաձայնեցված և/կամ համատեղ միջգերատեսչական, կանխարգելիչ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների, հատուկ օպերացիաների անցկացման ձևով՝ ԱՊՀ մասնակից պետությունների սահմաններով թմրանյութերի փոխադրման ուղիների հայտնաբերման,

խափանման, ինչպես նաև դրանց ապօրինի շրջանառության հետ կապ ունեցող անձանց հայտնաբերման, թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման (լվացման) համար բանկային, կոմերցիոն և այլ կառուցվածքների օգտագործումը խափանելու, թմրանյութերի արտադրման ընդհատակյա (ապօրինի) լաբորատորիաների ոչնչացման, թմրանյութ պարունակող ապօրինի մշակաբույսերի, ինչպես նաև թմրանյութ պարունակող վայրի բույսերի պոպուլյացիաների ոչնչացման և թմրանյութերի տարածման համար համացանցի հնարավորությունների օգտագործումը խափանելու նպատակներով (Հոդված 1, կետ 2.2):

4. Արձանագրությամբ նախատեսված փոփոխությունների արդյունքում Համաձայնագրի 4-րդ հոդվածի 5-11-րդ պարբերությունները համարվում են 7-13-րդ պարբերություններ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 մարտի 2021 թվականի
ՍԴՈ-1582